Հավելված №1
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2015 թվականի մարտի 4-ի №29Ն որոշմամբ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՎԹԱՐԱՅԻՆ ԿԱՄ ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ (ԲԱՇԽՈՂ-ՀԱՂՈՐԴՈՂ)

____ _____ 20_ թվական
ք._____

_____,
(ընկերության անվանումը)

այսուհետ՝ Բաշխող, ի դեմս

_____

_____,
(պաշտոնը, անունը, ազգանունը)

ղեկավարվելով ընկերության կանոնադրությամբ, գործունեության լիցենզիայով, Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով, մի կողմից, և

_____,
(ընկերության անվանումը)

այսուհետ՝ Հաղորդող, ի դեմս

_____

_____,
(պաշտոնը, անունը, ազգանունը)

ղեկավարվելով ընկերության կանոնադրությամբ, գործունեության լիցենզիայով, Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով, մյուս կողմից, այսուհետ համատեղ կոչվելով Կողմեր, իսկ առանձին՝ Կողմ, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սույն պայմանագրում օգտագործվող հասկացություններն են.
   1) **Հանձնաժողով՝** Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով,
   2) **վթարային կամ անհաղթահարելի ուժի հետևանքով առաջացած իրավիճակ՝** էլեկտրաէներգետիկական համակարգում առաջացած իրավիճակ, երբ պատվիրված պահուստային հզորություններով հնարավոր չէ իրականացնել տնտեսական կարգավարում,
   3) **Համակարգի օպերատոր՝** էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի լիցենզիա ունեցող իրավաբանական անձ,
   4) **Հաշվարկային կենտրոն՝** էլեկտրաէներգետիկական շուկային հաշվարկային կենտրոնի ծառայության մատուցման լիցենզիա ունեցող իրավաբանական անձ,
   5) **Հաշվարկային ամիս՝** ժամանակահատված, որի գործողությունը սկսվում է օրացուցային ամսվա առաջին օրվա ժամը 00^{00}-ին և ավարտվում է վերջին օրվա ժամը 24^{00}–ին:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

2. Վթարային կամ անհաղթահարելի ուժի հետևանքով առաջացած իրավիճակներում Հաղորդողը Բաշխողից գնում է էլեկտրական էներգիա՝ համաձայն Հանձնաժողովի հաստատած էլեկտրաէներգետիկական համակարգում վթարային կամ անհաղթահարելի ուժի հետևանքով առաջացած իրավիճակներում էլեկտրական էներգիայի ներկրման և արտահանման կարգի:

3. ՍԱԿԱԳԻՆԸ

3. Հաղորդողի կողմից վթարային կամ անհաղթահարելի ուժի հետևանքով առաջացած իրավիճակներում էլեկտրական էներգիայի գնումը Բաշխողից իրականացվում է էլեկտրաէներգետիկական համակարգի էլեկտրական էներգիայի գործող սակագների հաշվարկներով նախատեսված հաշվարկային տարվա հաշվեկշիռը եզրափակող կայանի էլեկտրական էներգիայի սակագնային դրույքով (երկդրույք սակագնային համակարգ) կամ սակագնով (միադրույք սակագնային համակարգ): Էլեկտրական էներգիայի գնման գինն ամրագրվում է սույն պայմանագրի №1 հավելվածում:
4. Հանձնաժողովի կողմից սակագնի փոփոխման դեպքում նոր սակագինն ուժի մեջ է մտնում Հանձնաժողովի սահմանած ժամկետից: Նման դեպքերում Կողմերը պարտավոր են համապատասխան փոփոխություններ կատարել սույն պայմանագրի №1 հավելվածում:

4. ԿՈՂՄԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5. Սույն պայմանագրի շրջանակում Կողմերը ղեկավարվում են «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ օրենքներով և Հանձնաժողովի իրավական ակտերով:
6. Բաշխողը պարտավորվում է՝
   1) ապահովել էլեկտրական էներգիայի հանձնումը Հաղորդողին արտահանման կետում,
   2) ստորագրել և ներկայացնել վճարման ենթակա էլեկտրական էներգիայի վերաբերյալ ակտը՝ այն ստանալուց հետո ___ օրվա ընթացքում,
   3) վճարման ենթակա էլեկտրական էներգիայի վերաբերյալ հաշիվ-ապրանքագիր ներկայացնել Հաղորդողին՝ սույն պայմանագրում սահմանված ժամկետում,
   4) իր միջոցներով իրականացնել իր սեփականությունը հանդիսացող՝ սույն պայմանագրով ամրագրված առևտրային հաշվառքի սարքերի սպասարկումը, շահագործումը և պահպանումը,
   5) Հաղորդողի հետ համաձայնեցված կարգով ապահովել Հաղորդողի լիազոր ներկայացուցչի մուտքը իր տարածք՝ անհրաժեշտ զննումներ (ստուգումներ) կատարելու համար:
7. Հաղորդողը պարտավորվում է՝
   1) գնել Բաշխողի հանձնած էլեկտրական էներգիան և վճարել դրա համար սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում,
   2) ստորագրել և ներկայացնել վճարման ենթակա էլեկտրական էներգիայի վերաբերյալ ակտը՝ այն ստանալուց հետո ___ օրվա ընթացքում,
   3) իր միջոցներով իրականացնել իր սեփականությունը հանդիսացող սույն պայմանագրով ամրագրված առևտրային հաշվառքի սարքերի սպասարկումը, շահագործումը և պահպանումը,
   4) Բաշխողի հետ համաձայնեցված կարգով ապահովել Բաշխողի լիազոր ներկայացուցչի մուտքը իր տարածք՝ անհրաժեշտ զննումներ (ստուգումներ) կատարելու համար:

5. ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

8. Էլեկտրական էներգիան հաշվառում է Հաշվարկային կենտրոնը՝ Հանձնաժողովի 2004 թվականի սեպտեմբերի 16-ի №110Ն որոշմամբ հաստատված

էլեկտրաէներգիայի (հզորության) հաշվառման կարգի համաձայն:

9. Հաշվարկային ամսվա վերջին օրվա դրությամբ հաշվառքի սարքերի (հավելված №2) տվյալների հիման վրա Հաշվարկային կենտրոնը կազմում է վճարման ենթակա էլեկտրական էներգիայի վերաբերյալ ակտը (հավելված №3) և ներկայացնում Կողմերի ստորագրմանը մինչև Հաշվարկային ամսվան հաջորդող ամսվա ____-ը:

6. ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

10. Վճարման ենթակա էլեկտրական էներգիայի վերաբերյալ ակտը ստորագրելուց հետո մինչև Հաշվարկային ամսվան հաջորդող ամսվա 15-ը Բաշխողը կազմում է հաշիվ-ապրանքագիր և ներկայացնում Հաղորդողին:
11. Հաղորդողը Հաշվարկային ամսվա ընթացքում գնված էլեկտրական էներգիայի դիմաց վճարումը կատարում է մինչև Հաշվարկային ամսվան հաջորդող ամսվա 25-ը:

7. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ

12. Վթարային կամ անհաղթահարելի ուժի հետևանքով առաջացած իրավիճակներում էլեկտրական էներգիայի ընդունում-հանձնումը Կողմերն իրականացնում են արտահանման կետում:
13. Վթարային կամ անհաղթահարելի ուժի հետևանքով առաջացած իրավիճակներում Համակարգի օպերատորը կարող է դադարեցնել էլեկտրական էներգիայի արտահանումը՝ այդ մասին գրավոր տեղյակ պահելով Հաղորդողին, Բաշխողին և Հաշվարկային կենտրոնին՝ հետևյալ դեպքերում՝
    1) էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալիության և անվտանգության խախտման կամ խախտման առաջացման վտանգի դեպքում,
    2) էլեկտրամատակարարման անխուսափելի սահմանափակումներ պահանջող իրավիճակներում:
14. Կողմերը պարտավոր են սույն պայմանագրի պատճենները տրամադրել Հաշվարկային կենտրոնին և Համակարգի օպերատորին:
15. _____
_
_____
:

8. ՏԱՐԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

16. Սույն պայմանագրի առնչությամբ Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են

բանակցությունների միջոցով, իսկ Կողմերից մեկի գրավոր դիմումի դեպքում՝ Հանձնաժողովի միջնորդությամբ՝ նրա կողմից սահմանված կարգով: Սույն պայմանը չի սահմանափակում Կողմերի իրավունքը՝ վեճերը լուծելու դատական կարգով:

17. Եթե տարաձայնության առարկան Հաշվարկային կենտրոնի ներկայացրած՝ վճարման ենթակա էլեկտրական էներգիայի վերաբերյալ ակտն է, ապա ցանկացած դեպքում Կողմերը պարտավոր են ստորագրել այդ ակտը, իսկ Հաղորդողը պարտավոր է կատարել վճարումը, որից հետո միայն լուծել տարաձայնությունը: Տարաձայնություն ունեցող Կողմը պարտավոր է վճարման ենթակա էլեկտրական էներգիայի վերաբերյալ ստորագրած ակտին կցել հատուկ կարծիք:

9. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

18. Պայմանագրային պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերը պատասխանատվություն են կրում սույն պայմանագրով և Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով:
19. Սույն պայմանագրի 11-րդ կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում Բաշխողն իրավունք ունի Հաղորդողից պահանջել վճարելու տույժ՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար չվճարված գումարի 0.1 տոկոսի չափով:

10. ՖՈՐՍ ՄԱԺՈՐԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

20. Կողմերը սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների խախտման համար պատասխանատվություն չեն կրում, եթե այն հետևանք է ֆորս մաժորի: Սույն պայմանագրի իմաստով ֆորս մաժոր են համարվում արտակարգ և անկանխելի այն դեպքերն ու հանգամանքները, որոնք առաջացել են կողմերի կամքից անկախ և միևնույն ժամանակ անկախ վերջիններիս գործադրած ջանքերից խոչընդոտել են պարտավորությունների կատարմանն ուղղված կողմերի գործողություններին: Սույն պայմանագրի իմաստով արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ են բնական և տեխնածին աղետները, բնության ուժերի արտասովոր դրսևորումները (այդ թվում՝ ջրհեղեղներ, երկրաշարժեր, փոթորիկներ, պտտահողմեր, կայծակով և ամպրոպով ուղղորդվող հորդառատ անձրևներ, ձնաբուքեր, սողանքներ), գործադուլները, հասարակական անկարգությունները, ահաբեկչությունները, պատերազմները, ապստամբությունները: Սույն կետը չի սահմանափակում Կողմերի իրավունքը՝ նկարագրվածից բացի այլ արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ ի հայտ գալու պարագայում դիմել Հանձնաժողով՝ դրանք ֆորս մաժոր ճանաչելու համար:

21. Կողմերը պարտավոր են վերոհիշյալ վիճակների մասին անհապաղ տեղեկացնել միմյանց՝ նշելով դրանց հետևանքների վերացման հնարավոր ժամկետները:

11. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐԳԸ

22. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Հանձնաժողովում գրանցման պահից և գործում է մինչև _____:
23. Սույն պայմանագիրը կարող է փոփոխվել փոխադարձ համաձայնությամբ: Փոփոխված պայմանագիրն ուժի մեջ է մտնում Հանձնաժողովում գրանցման պահից:
24. Հանձնաժողովի կողմից էլեկտրաէներգետիկական համակարգում վթարային կամ անհաղթահարելի ուժի հետևանքով առաջացած իրավիճակներում արտահանման նպատակով էլեկտրական էներգիայի առուվաճառքի (Բաշխող-Հաղորդող) պայմանագրի նոր օրինակելի ձև հաստատելու կամ գործող օրինակելի ձևում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու դեպքում դրանք ուժի մեջ են մտնում Հանձնաժողովի սահմանած ժամկետից: Կողմերը պարտավոր են Հանձնաժողովի սահմանած ժամկետում կնքել նոր պայմանագիր կամ համապատասխան փոփոխություններ, կամ լրացումներ կատարել գործող պայմանագրում:
25. Սույն պայմանագիրը կազմված է 3 օրինակից՝ մեկական Կողմերից յուրաքանչյուրի և Հանձնաժողովի համար:

12. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՑԱՆԿԸ

26. Սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելվածներն են՝
    1) էլեկտրական էներգիայի գների մասին համաձայնագիրը (հավելված №1),
    2) էլեկտրական էներգիայի հաշվառքի սարքերի մասին համաձայնագիրը (հավելված №2),
    3) վճարման ենթակա էլեկտրական էներգիայի վերաբերյալ ակտը (հավելված №3):

13. ԿՈՂՄԵՐԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Բաշխող՝	Հաղորդող՝
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
Հ/Հ _____	Հ/Հ _____
Հեռախոս _____	Հեռախոս _____
Ֆաքս _____	Ֆաքս _____
Գործունեության լիցենզիա № _____	Գործունեության լիցենզիա № _____

Ղեկավար _____ Ղեկավար _____

_____ _____

(ստորագրություն, անուն, ազգանուն) (ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ.Տ. **Կ.Տ.**

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով

Գրանցված է ___ _____20__թվականի

Գրանցման № _____

Կ.Տ

Պատասխանատու _____

(ստորագրություն, անուն, ազգանուն)

Հավելված №1

Էլեկտրաէներգետիկական համակարգում վթարային կամ անհաղթահարելի ուժի հետևանքով առաջացած իրավիճակներում արտահանման նպատակով էլեկտրական էներգիայի առուվաճառքի (Բաշխող-Հաղորդող) 20__թվականի _____ ____ №__ պայմանագրի

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Սույն համաձայնագրով Հաղորդողը և Բաշխողը փոխադարձ համաձայնությամբ սահմանում են Հաղորդողի կողմից Բաշխողից գնվող էլեկտրական էներգիայի հետևյալ սակագինը՝ _____ դրամ/կՎտժ:

2. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից էլեկտրաէներգետիկական համակարգի էլեկտրական էներգիայի գործող սակագների հաշվարկներով նախատեսված հաշվարկային տարվա հաշվեկշիռը եզրափակող կայանի համար սահմանված էլեկտրական էներգիայի

_____
_

(սակագնային դրույքն է (երկդրույք սակագնային համակարգ) կամ սակագինն է (միադրույք սակագնային համակարգ)

_____ դրամ/կՎտժ:

ԲԱՇԽՈՂ	ՀԱՂՈՐԴՈՂ
_____	_____
(պաշտոն, ստորագրություն, անուն, ազգանուն)	(պաշտոն, ստորագրություն, անուն, ազգանուն)
___ _____ 20__ թվական	___ _____ 20__ թվական
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված №2

Էլեկտրաէներգետիկական համակարգում վթարային կամ անհաղթահարելի ուժի հետևանքով առաջացած իրավիճակներում արտահանման նպատակով էլեկտրական էներգիայի առուվաճառքի (Բաշխող-Հաղորդող) 20__թվականի _____ ____ №__ պայմանագրի

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՀԱՇՎԱՌՔԻ ՍԱՐՔԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Առևտրային և վերստուգիչ հաշվառքի սարքերը.

Առևտրային հաշվառքի սարքերի տեղադրման վայրերը	Առևտրային հաշվառքի սարքերի համարը և տեսակը	Հոսանքի և լարման տրանսֆորմատորների փոխարկման գործակիցները			Վերստուգիչ հաշվառքի սարքերի տեղադրման վայրերը, համարը և տեսակը	Հոսանքի և լարման տրանսֆորմատորների փոխարկման գործակիցները		
		$K_{հտ}$	$K_{լտ}$	$K_{հտ}xK_{լտ}$		$K_{հտ}$	$K_{լտ}$	$K_{հտ}xK_{լտ}$

2. Առևտրային հաշվառքի սարքերը տնօրինում և սպասարկում է _____ _____ -ը:

3. Վերստուգիչ հաշվառքի սարքերը տնօրինում և սպասարկում է _____ _____ -ը:

ԲԱՇԽՈՂ	ՀԱՂՈՐԴՈՂ
_____	_____
(պաշտոն, ստորագրություն, անուն, ազգանուն)	(պաշտոն, ստորագրություն, անուն, ազգանուն)
__ _____20__թվական	__ _____20__թվական
Կ.Տ.	Կ.Տ.

Համաձայնեցված է

ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

_____

(պաշտոն, ստորագրություն, անուն, ազգանուն)

__ _____20 __թվական

Կ.Տ.

Հավելված №3

Էլեկտրաէներգետիկական համակարգում վթարային կամ անհաղթահարելի ուժի հետևանքով առաջացած իրավիճակներում արտահանման նպատակով էլեկտրական էներգիայի առուվաճառքի (Բաշխող-Հաղորդող) 20__թվականի _____ ____ №__ պայմանագրի

ԱԿՏ

ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաղորդող

_____

Բաշխող

_____

Հաշվարկային ժամանակաշրջան __ _____ 20__ թվականից մինչև __ _____ 20_ թվականը

Բաշխողի կողմից Հաղորդողին վաճառված էլեկտրական էներգիայի քանակը՝ _____ կՎտժ

Հիմքը

_____

ԲԱՇԽՈՂ

_____

(պաշտոն, ստորագրություն, անուն,

ՀԱՂՈՐԴՈՂ

_____

(պաշտոն, ստորագրություն, անուն,

_____
ազգանուն)

___ _____ 20__ թվական

Կ.Տ.

_____
ազգանուն)

___ _____ 20__ թվական

Կ.Տ.

ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

_____
(պաշտոն, ստորագրություն, անուն, ազգանուն)

___ _____ 20__ թվական

Կ.Տ.